

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԱԳԱԾ ԱՐԱՅԻ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ազրարային
համալսարանում

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Արեգ Մերուժանի Բաղդասարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աննա Լևոնի Ասլանյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Ներսես Հենրիկի Երիցյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2015թ. փետրվարի 26-ին ժամը 15³⁰-ին,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի
տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. հունվարի 26-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Ս.Ա. Գևորգյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը:

Քաղաքական և տնտեսական էությամբ սոցիալական ապահովությունն իրենից ներկայացնում է հասարակության անաշխատունակ և նյութական բարիքներ ստեղծող անդամների տնտեսական շահերի համաձայնեցում, որի կարևորագույն մասն էլ կազմում է կենսաթոշակային ապահովությունը: Չնայած նրան, որ առաջին կենսաթոշակային համակարգերը ծագել են ավելի քան 100 տարի առաջ և բազմաթիվ փոփոխությունների են ենթարկվել, այնուամենայնիվ, բնակչության կենսաթոշակային ապահովման ոլորտում առկա են բազմաթիվ խնդիրներ, հատկապես արդիական են և բավական սուր հնչողություն ունեն կառավարման ու վերահսկողության հիմնախնդիրները:

Մինչև վերջերս Հայաստանի կենսաթոշակային ապահովության ոլորտում գործող համակարգը եղել է բաշխողական: Ներկայումս պետությունը կենսաթոշակային համակարգի բարեփոխումների միջոցով փորձում է ստեղծել կուտակային կենսաթոշակային համակարգ, ինչի արդյունքում տեղի կունենա կապիտալի կուտակում և ֆինանսական շուկաների զարգացում:

Փորձը ցույց է տալիս, որ կենսաթոշակային համակարգի բարեփոխումները սոցիալական դժգոհություն են ծնում, քանի որ բարեփոխումները մեծ մասամբ կապված են կենսաթոշակի անցնելու տարիքի սահմանի ավելացման, արտոնյալ թոշակներից հրաժարվելու կամ կենսաթոշակային ֆոնդերում ներդրումների ավելացման հետ: Նշվածի հետ մեկտեղ խնդիրներ են առաջացել նաև կենսաթոշակային ֆոնդերի վերահսկողության ոլորտում, ինչն էլ, էլ ավելի է բարդացնում ստեղծված իրավիճակը: Տարբեր երկրներում ձևավորվել են կենսաթոշակային ֆոնդերի՝ պետության կողմից մշակված վերահսկողության տարբեր համակարգեր և մեխանիզմներ, որոնք ևս բարեփոխման և կատարելագործման կարիք ունեն¹:

Այսպիսով, նման թեմայի ընտրությունը պայմանավորված է կենսաթոշակային համակարգում իրականացվող բարեփոխումների ժամանակակից

¹ Грызлова А.В., Яненко Е.А. Обзор зарубежных пенсионных систем. «Отечественные записки», 2005, №3, ст 37

հիմնախնդիրներով և ներկա իրավիճակում, սոցիալական կարևոր խնդիրների կարգավորման կարևորությամբ: Ուստի, ատենախոսության թեման արդիական է, քանի որ այն համահունչ է ներկա տնտեսավարման պայմաններին և ուղղված է սոցիալ-տնտեսական քաղաքականության կատարելագործմանը Հայաստանի Հանրապետությունում:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակը Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային համակարգի կարգավորման և վերահսկողության կատարելագործման առաջնահերթ ուղղությունների հիմնավորումն է՝ հարմարեցված ժամանակակից տնտեսության պահանջներին՝ հաշվի առնելով միջազգային փորձն ու զարգացման միտումները, կենսաթոշակային համակարգի առավել հրատապ հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծմանն ուղղված արդյունավետ ռազմավարության մշակման ելակետային հիմնադրույթների առաջադրումը, ինչի համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- պարզաբանել կենսաթոշակային համակարգի էությունը, վեր հանել բաղադրիչները և հիմնական տեսակները,
- վերհանել և գնահատել կենսաթոշակային ֆոնդերի և կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների աուդիտի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում,
- ուսումնասիրել կենսաթոշակային ֆոնդերի ֆինանսների կառավարումը Հայաստանի Հանրապետությունում՝ գնահատելով կենսաթոշակային ֆոնդերի կայունությունն ու ապահովությունը,
- գնահատել մասնավոր կենսաթոշակային ապահովագրության միջազգային փորձը և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում,
- նախանշել և հիմնավորել կենսաթոշակային ֆոնդերի գործունեության կարգավորման և վերահսկողության կատարելագործման ուղիները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգն է, իսկ առարկան՝ կենսաթոշակային համակարգի կարգավորման և վերահսկողության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:

Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել կենսաթոշակային համակարգի ներդրման, մշակման ուղղությամբ կատարված բազմաթիվ հայրենական և արտասահմանյան գիտական աշխատություններ, մենագրություններ, այդ թվում՝ միջազգային մասնագիտական կազմակերպությունների գիտավերլուծական, մեթոդաբանական նյութերը, ինչպես նաև պետության սոցիալական ու կենսաթոշակային ծրագրերի իրականացման ուղղությունները ու նպատակները:

Աշխատանքի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տեղեկագրերը, ոլորտին առնչվող գերատեսչությունների պաշտոնական տվյալները, գիտահետազոտական հրապարակումները, ինչպես նաև Համաշխարհային Բանկի և ԱՊՀ երկրների վիճակագրական պետական կոմիտեի և համանման այլ միջազգային ֆինանսական ու վիճակագրական մարմինների պաշտոնական տվյալներն ու կանխատեսումները, ՀՀ գործող օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական վերլուծությունների, գիտական աբստրակցիայի, մոդելավորման և արտարկման մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը և հիմնական արդյունքները:

Աշխատանքի հիմնական գիտական նորույթը բնութագրվում է հետևյալ արդյունքներով՝

- հիմնավորվել է կենսաթոշակային ֆոնդերի գնահատման չափանիշների առկայության անհրաժեշտությունը, մշակվել են հիմնական չափանիշները, մասնավորապես՝ կենսաթոշակային ֆոնդերի ֆինանսական կայունության, իրացվելիության և ներդրումների արդյունավետության բացարձակ ու հարաբերական ցուցանիշների համակարգը,
- մշակվել են կենսաթոշակային ֆոնդերի գործունեության կարգավորման և վերահսկողության կատարելագործման հիմնական ուղիները, մասնավորապես՝ կարգավորման դաշտի բարելավման, հեռակա վերահսկողության ու ստուգումների անցկացման ընթացակարգերի

կատարելագործման ուղիները, ինչպես նաև՝ ռիսկերի առաջացման կանխարգելիչ ազդակների համակարգը,

— հիմնավորվել է կենսաթոշակային համակարգի միավորված վերահսկողական մարմնի ստեղծման անհրաժեշտությունը՝ նախանշելով կարգավորման հիմնական ուղղությունները և ձևավորման հայեցակարգային մոտեցումները:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է կենսաթոշակային համակարգի արդյունավետության բարձրացման խնդիրներով: Ներկայացված հետազոտական վերլուծությունները, առաջարկություններն ու մեթոդաբանական մոտեցումները կարող են օգտագործվել երկրում կենսաթոշակային համակարգում իրականացվող նոր բարեփոխումների և ռազմավարության մշակման ընթացքում, հետագայում դրանք կիրառական հարթություն տեղափոխելու և, արդյունքում՝ իրական ու առարկայական արդյունքների հասնելու համար: Գիտական աշխատանքի արդյունքները կիրառելի են նաև կենսաթոշակային համակարգի բարեփոխումներում ընդգրկված մի շարք կառույցների՝ պետական մարմինների, ինստիտուցիոնալ ենթակառույցների և այլ կազմակերպությունների աշխատանքներում, հետազոտություններում ու վերլուծություններում: Բացի այդ, հետազոտության արդյունքները կարող են կիրառվել նաև ՀՀ սոցիալական զարգացման ոլորտում միջազգային կազմակերպությունների և նրանց փորձագետների կողմից իրականացվող հետազոտություններում և վերլուծություններում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի 3 գիտական հրապարակումներում:

Աշխատանքի ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը շարադրված է 131 մեքենագիր էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը: Այն բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից (135 անուն) ու հավելվածներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության առարկան և օբյեկտը, ուսումնասիրության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են աշխատանքի գիտական նորույթն ու արդյունքների իրացումը, հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ «Կենսաթոշակային համակարգի կարգավորման և վերահսկողության արդի մեթոդաբանական հիմնախնդիրները» գլխում ներկայացվել են կենսաթոշակային համակարգի էությունը, բաղադրիչները, հիմնական տեսակները, կենսաթոշակային ֆոնդերը և կառավարման առանձնահատկությունները, կենսաթոշակային համակարգի ձևավորման միջազգային փորձը, քննարկվել են կենսաթոշակային համակարգի կարգավորման և վերահսկողության հիմնախնդիրները ԱՄՆ-ում և Եվրամիության երկրներում:

Ինչպես գիտենք, աշխարհում գոյություն ունեն կենսաթոշակային տարբեր համակարգեր, ընդ որում փորձը ցույց է տալիս, որ կենսաթոշակային համակարգը պետք է համապատասխանի երկրի տնտեսական զարգացման մակարդակին և կայունությանը, նրա մասշտաբներին, ավանդույթներին, սոցիալական ապահովության ձևավորված փորձին, վարձու աշխատողների կազմակերպվածության աստիճանին, կենսաթոշակային ապահովության ինստիտուցիոնալ զարգացմանը²:

Հեղինակը ատենախոսության մեջ ներկայացրել է սոցիալական ապահովության «բիսմարկյան», «Բներիջյան», «ժողովրդական», «կաթոլիկական (լատինական)» մոդելների առանձնահատկությունները և դրանք խմբավորել երկու խոշոր մոդելների մեջ՝

- սահմանված կենսաթոշակի (ՄԿ) մոդել,
- սահմանված վճարների (ՄՎ) մոդել:

² Волошина А. Ю. Мировой опыт развития пенсионных систем: общемировые тенденции и межстрановые различия. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук. Москва – 2007., ст 18

Ատենախոսությունում քննարկվել են բաշխողական և կուտակային կենսաթոշակային համակարգերի համեմատական առանձնահատկությունները, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդերի ձևավորման անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում շուկա են մուտք գործել մի քանի կենսաթոշակային ֆոնդի կառավարիչներ, որոնք առաջարկում են երեք տեսակի ֆոնդեր՝

- հավասարակշռված ֆոնդ, որտեղ բաժնետոմսերը ֆոնդում կարող են կազմել ոչ ավել, քան 50%
- պահպանողական ֆոնդ, որտեղ բաժնետոմսերը կարող են կազմել ոչ ավել, քան 25%
- կայուն եկամտային ֆոնդ, որն ամբողջությամբ կազմված է լինելու ֆիքսված եկամտաբերությամբ ակտիվներից, դրանք հիմնականում պարտատոմսերն են:

Հեղինակը ներկայացրել է ԱՄՆ-ի և Եվրամիության մի շարք երկրների, մասնավորապես՝ Գերմանիայի, Շվեդիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Նիդեռլանդների, Ֆինլանդիայի, կենսաթոշակային համակարգերի կառավարման և վերահսկողության հիմնախնդիրները: 20-րդ դարում տեղի էր ունեցել զարգացած երկրների կենսաթոշակային համակարգերի աստիճանաբար մերձեցում: Այնտեղ, որտեղ համակարգը հիմնված էր ապահովագրական վճարների վրա (Գերմանիա), ներդրվել են նվազագույն կենսաթոշակի երաշխիքներ, որոնք կախված չէին նախորդ վճարումներից: Իսկ այն երկրներում, որտեղ կենսաթոշակային համակարգը ենթադրում էր ընդհանուր եկամուտների հաշվին ֆինանսավորվող հավասար կենսաթոշակներ, վերացվել է կարիքավորության հսկողությունը: Ի լրումն նվազագույն կենսաթոշակների, ներդրվել է պարտադիր սոցիալական ապահովագրության համակարգ:

Ատենախոսության երկրորդ՝ «Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի վերլուծությունը և կենսաթոշակային ֆոնդերի կարգավորման հիմնախնդիրները» գլխում հեղինակը կատարել է Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի վերլուծություն սոցիալական քաղաքականության համատեքստում, ներկայացրել են Հայաստանի

Հանրապետության կենսաթոշակային համակարգի բարեփոխումների հիմնական ուղղությունները, կենսաթոշակային ֆոնդերի և կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների աուդիտի հիմնախնդիրները, կենսաթոշակային ֆոնդերի ֆինանսների կառավարումը և կայունության ապահովության գնահատումը, ինչպես նաև իրականացրել է կենսաթոշակային բարեփոխումների պետական ծախսերի մակարդակի կանխատեսումները:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը ժառանգեց լայնամասշտաբ բաշխողական կենսաթոշակային համակարգ, որը շարունակեց իր գործունեությունը ծանր ճգնաժամային պայմաններում: Կենսաթոշակային համակարգի համախառն կենսաթոշակային եկամուտները շատ փոքր էին՝ ՀՆԱ-ի ընդամենը 3.8%-ը (նշենք, որ համաձայն Համաշխարհային բանկի տվյալների, կենսաթոշակային ֆոնդերի ակտիվները կազմում են ՀՆԱ-ի՝ 117.1%-ը Շվեյցարիայում, 87.3%-ը Նիդերլանդներում, 86.4%-ը ԱՄՆ-ում, 83.7%-ը Միացյալ Թագավորությունում և այլն)³: Այդ իրավիճակը պայմանավորված էր մի շարք հիմնախնդիրներով, այդ թվում՝ ժողովրդագրական փոփոխություններով, ստվերային տնտեսության ավելացմամբ, զբաղվածության մակարդակի կրճատմամբ, արտադրության ծավալների անկմամբ, բնակչության դրամական եկամուտների կառուցվածքում աշխատավարձի տեսակարար կշռի նվազմամբ և այլն⁴:

Սոցիալական քաղաքականության ամենամեծ և ամենակարևոր բաղադրիչներն են բնակչության սոցիալական տրանսֆերտները, որոնք իրականացվում են կենսաթոշակների և նպաստների տեսքով:

Սերունդների համերաշխության սկզբունքով գործող համակարգի կատարելագործման նպատակով 1999թ.-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատել է կենսաթոշակային համակարգի զարգացման առաջին ծրագրային փաստաթուղթը, և մինչ 2007թ.-ը իրականացվել են այդ ծրագրով նախատեսված միջոցառումները:

2010-2012 թթ. կենսաթոշակների գծով ծախսերն անվանական արտահայտությամբ ավելացել են շուրջ 20 տոկոսով: Դա առավելապես բացատրվում է 2010

³ Համաշխարհային բանկ, www.worldbank.org:

⁴ Արմենակյան Ռ.Ռ. Եկամուտների բաշխման հիմնախնդիրը շուկայական համակարգին անցման շրջանում, Եր.2002թ, էջ 56-58:

թվականի վերջին ամսական հիմնական կենսաթոշակի (2008 թվականի 6,800-ից՝ 2009 թ-ին՝ մինչև 8,000 ՀՀ դրամ, իսկ 2010 թվականի նոյեմբերից՝ մինչև 10,500 ՀՀ դրամ) և ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի բարձրացմամբ (2009 թվականից ի վեր՝ 450 ՀՀ դրամ՝ 2008 թվականի 395 ՀՀ դրամի փոխարեն): Այդուհանդերձ, նման ավելացումների պարագայում միջին ապահովագրական կենսաթոշակի և հիմնական կենսաթոշակի գծով ԿԶԾ-ի միջնաժամկետ հատվածի համար սահմանված թիրախների ապահովումը գրեթե անհասանելի է դառնում⁵:

Պետք է նշել, որ չնայած 2012թ. սկսած, խնամառության ընդհանուր գործակիցը՝ աշխատանքային տարիքից բարձր բնակչության հարաբերակցությունը աշխատանքային տարիքի բնակչությանը, անընդհատ ավելանալու է՝ 2050 թվականին հասնելով շուրջ 0.40-ի (2013թ 0.18-ի փոխարեն), այդուհանդերձ, խնամառության արդյունավետ գործակիցը՝ աշխատանքային տարիքից բարձր բնակչության հարաբերությունը սոցիալական ապահովության վճարներ կատարողների թվաքանակից, հնարավոր է, որ առաջիկա 10-15 տարիներին զգալիորեն բարելավվի, եթե պահպանվեն զբաղվածության ֆորմալացման աստիճանի ավելացման վերջին հինգ տարիների միտումները⁶:

Հեղինակը մատնանշում է, որ 2009-2013 թթ. պետության կողմից ձեռնարկել են նաև գործողություններ՝ միտված ոլորտի երկարաժամկետ հատվածում բարեփոխումներին:

Կուտակային կենսաթոշակների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը և այլ իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների կատարումը ենթադրում են, որ Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգում բարեփոխումները շարունակվելու են երկու հիմնական ուղղություններով՝

1. գործող բաշխողական համակարգի պարամետրիկ բարեփոխումներ և արդյունավետության բարձրացում,
2. կենսաթոշակային բազմաստիճան համակարգի (մասնավորապես՝ կուտակային բաղադրիչի) ներդրմանն ուղղված գործողություններ:

⁵ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. www.armstat.am:

⁶ Նույն տեղում:

Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի հայաստանյան մոդելը խարսխված է գործող բաշխողական համակարգի վրա, որն ըստ էության լրացվել է երկու նոր՝ պարտադիր և կամավոր կուտակային աստիճաններով:

Հեղինակը ատենախոսության մեջ անդրադարձել է կենսաթոշակային ֆոնդերի և կենսաթոշակային ֆոնդերի աուդիտի հիմնախնդիրներին ՀՀ-ում: Օրենքը նշում է, որ կենսաթոշակային ֆոնդերի և դրանց կառավարիչների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացվում է <<Ներդրումային ֆոնդերի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով⁷:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ֆոնդերի և ֆոնդերի կառավարիչների աուդիտի ոլորտում կարևորագույն բացերից է այն, որ բացակայում են ներդրումային, այդ թվում կենսաթոշակային ֆոնդերի և ֆոնդերի կառավարիչների աուդիտն իրականացնող անձանց նկատմամբ հստակ սահմանված պահանջներ: Մասնավորապես, նման պահանջներ գործում են բանկի, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների, հաշվետու թողարկողների աուդիտն իրականացնող անձանց նկատմամբ:

Ուսումնասիրելով տարբեր երկրներում գործող կենսաթոշակային համակարգերը և դրանց վերահսկող մարմինների գործունեությունը, հեղինակը եզրակացություն է անում, որ ներկայումս զարգացած երկրների մեծ մասում գործում է կուտակային կենսաթոշակային համակարգ:

Սոցիալական ապահովության, տվյալ դեպքում կենսաթոշակային համակարգի կողմից քաղաքացիներին անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու համար, նախ անհրաժեշտ է որոշել դրա ֆինանսավորման աղբյուրները: Ընդ որում, ֆինանսավորման չափը մշտապես պետք է պահպանել օպտիմալ մակարդակի վրա:

Սոցիալական ապահովության համակարգի ֆինանսավորման աղբյուրներ կարող են հանդիսանալ.

1. պետական բյուջեի միջոցները (այսինքն հարկատուների հաշվին),
2. սոցիալական ապահովության համակարգին կատարվող սոցիալական վճարումները (սոցիալական ապահովագրության վճար):

⁷ Ներդրումային ֆոնդերի մասին ՀՀ օրենքը. 22.12.2010թ.

Այնուհետև՝ անհրաժեշտ է վերանայել կենսաթոշակային համակարգի վերահսկողության կառուցակարգերը: Տարբեր պետություններում գործում են կենսաթոշակային ֆոնդերը վերահսկող բազմաթիվ մասնագիտացված մարմիններ, որոնք էլ իրենց հերթին գտնվում են պետության վերահսկողության ներքո⁸: Կենսաթոշակային համակարգը հարկային վարչարարությունից տեղափոխվում է ֆինանսական համակարգի վերահսկողության դաշտ: Վերանում է նաև անհրաժեշտությունը հսկելու պարտադիր կենսաթոշակային վճարումների ոլորտը, քանի որ և քաղաքացին, և կենսաթոշակային մասնավոր ֆոնդը խթան ունեն ստուգելու, որ գործատուն ճիշտ կատարի բոլոր վճարումները: Վեճերը կլուծվեն դատական կարգով:

Անցումը նոր համակարգի առանձին գլոբալ խնդիր է, որը պահանջում է մանրամասն վերլուծություններ և քննարկման առարկա է: Այնուամենայնիվ, ատենախոսության մեջ հեղինակը դա առաջարկում է հետևյալ ձևերով.

1) Առաջին տարբերակը ենթադրում է միանգամից բաշխողական համակարգի վերացում և կուտակային համակարգի ներդրում: Վերանում է սոցիալական հարկը:

2) Երկրորդ տարբերակը նախատեսում է որոշ երկարատև ժամանակահատվածի (25-30 տարի) ընթացքում բաշխողական համակարգի պահպանում և միաժամանակ պարտադիր կուտակային համակարգի զարգացում: Սոցիալական հարկը վերանում է աստիճանաբար՝ ժամանակի ընթացքում:

Անցման ընթացքում առաջանում են հետևյալ կարգավորման առարկա հանդիսացող խնդիրները.

Բնակչության ընդգրկումը: Պետք է որոշվի կուտակային համակարգ պարտադիր տեղափոխման ենթակա բնակչության տարիքային խումբը: Վերջինս պետք է բաղկացած լինի երիտասարդներից (օրինակ՝ բոլոր աշխատողները մինչև 30-35 տարեկան): Այդ սահմանից բարձր աշխատողների նկատմամբ հնարավոր է հետևյալ մոտեցումների կիրառումը՝

Տարբերակ 1. Բոլորին՝ ներառյալ առկա կենսաթոշակառուներին, տրվում է ընտրության իրավունք՝ մնալ հին համակարգում կամ մտնել նորը, առկա

⁸ А.М Бабич, Е. Н. Егоров, Е.Н Жильцов “ Экономика социального страхования. М.: ТЭИС, 1998. – 189 с.

կենսաթոշակատուները մյուսների նման ընտրում են որևէ կենսաթոշակայի ֆոնդ և հաշվառվում վերջինիս կողմից: Կառավարությունը մասնավոր ֆոնդին տրամադրում է տարեկան ֆիքսված տոկոսադրույքով պարտատոմս, որի գումարը հաշվարկվում է փաստացի կենսաթոշակը բազմապատկելով գնահատված միջին մնացած ապրելու տարիների վրա: Այս տարբերակի առավելությունն այն է, որ կենսաթոշակատուն կատանա ավելի որակյալ ծառայություն և նրա համար կերաշխավորվի կենսաթոշակի աճ կյանքի մնացած տարիների համար՝ պարտատոմսերի տոկոսադրույքի չափով: Պարտատոմսերի այս մասը շուկայական է և կարող է վաճառվել ֆոնդի կողմից:

Տարբերակ 2. Մինչև 30-35 տարեկան խմբում չընդգրկված քաղաքացիները տարանջատվում են երկու խմբի, որից առաջին խմբի քաղաքացիներին (առավել երիտասարդների խումբ 35–45 տարեկան) տրվում է ընտրության իրավունք՝ մնալ հին համակարգում կամ մտնել նոր համակարգ: Իսկ երկրորդ խմբի քաղաքացիները (առավել մեծահասակների խումբ՝ 45 և ավել տարեկան), այդ թվում՝ առկա կենսաթոշակատուները, շարունակում են հաշվառվել ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության կողմից և ստանալ պետական կենսաթոշակ, որը ֆինանսավորվում է պետական բյուջեից:

Դրա ֆինանսավորումը կարող է իրականացվել՝

- բաշխողական համակարգից, վերջինիս պահպանման դեպքում, կամ
- կենսաթոշակային ֆոնդերից փոխառությունների միջոցով, կամ
- ընդհանուր հարկային եկամուտների կամ խնայողությունների հաշվին:

Անցման գործընթացը բաշխվում է որոշակի տարիների վրա, որից հետո ամբողջ բնակչությունը ընդգրկված կլինի նոր համակարգում: Նախ և առաջ հաշվարկվում են մինչբարեփոխումնային ժամանակահատվածում յուրաքանչյուրի առաջացած կենսաթոշակային իրավունքները: Վերջինս կարող է իրականացվել երկու տարբերակով՝

1) իրականացվում է յուրաքանչյուրի անունով մինչ բարեփոխումնային ժամանակաշրջանի ընթացքում փաստացի վճարված գումարի հաշվարկումը և ֆիքսումը, կամ

2) Մեկ տարվա ապահովագրական ստաժի համար սահմանվում է որոշակի հաշվարկային գումար և յուրաքանչյուրի մինչքարեփոխումնային ապահովագրական ստաժի տարիների քանակը բազմապատկվում է այդ գումարով:

Երկրորդ տարբերակն իրացման տեսանկյունից ավելի դյուրին է, քանի որ փաստացի վճարված գումարի չափը պարզելը համարյա անհնարին է և կարող է բերել բազմաթիվ խարդախությունների:

Փոխհատուցումն իրականացվում է նոր համակարգ տեղափոխված յուրաքանչյուր աշխատողին կենսաթոշակային ֆոնդում բացված իր անձնական հաշվին՝ հաշվարկված գումարի չափով: Փոխհատուցման իրականացման ձևերը կարող են լինել՝

1) ուղիղ սուբսիդիաների միջոցով փոխհատուցում՝ գումարները փոխանցվում են աշխատողների կենսաթոշակային հաշիվներին կամ,

2) հատուկ պետական պարտատոմսերի միջոցով փոխհատուցում. այս պարտատոմսերն ուղղակի փոխանցվում են կուտակային կենսաթոշակային ֆոնդեր՝ քաղաքացիների անձնական հաշիվներում հաշվառման:

Ատենախոսության հեղինակը երկրորդ տարբերակն ավելի նպատակահարմար է դիտում՝ հաշվի առնելով անցման հետ կապված բյուջեի ֆինանսական աջակցության անհրաժեշտությունը:

Այս խնդիրը պետք է առաջադրվեր դեռ անհատական (անձնավորված) հաշիվների համակարգի ներդրման ժամանակ:

Հեղինակը կանխատեսում է, որ առաջիկայում սոցիալական պաշտպանության ծախսերը կավելանան ինչպես անվանական արտահայտությամբ, այնպես էլ՝ որպես համախմբված բյուջեի ծախսերի մասնաբաժին և տոկոսային արտահայտությամբ՝ ՀՆԱ նկատմամբ: 2017-2021 թթ. դրանք կպահպանվեն ՀՆԱ-ի 8-9 տոկոսի սահմաններում, իսկ որպես համախմբված բյուջեի ծախսերի մասնաբաժին՝ 31-32%-ի սահմաններում: 2017 թ-ին, 2010 թ. համեմատ, անվանական արտահայտությամբ կաճեն 2.2, իսկ 2021 թ.՝ 3.5 անգամ: Սոցիալական պաշտպանության պետական ծախսերի գերակշիռ մասն ուղղված կլինի կենսաթոշակային համակարգի ծախսերի ապահովմանը: Կենսաթոշակային ապահովմանն ուղղված միջոցների

մասնաբաժինը սոցիալական պաշտպանության ընդհանուր ծախսերում 2017-2025 թթ. կկազմի 75-83%-ը⁹:

Հաշվի առնելով վերը նշված իրողությունները՝ առաջիկա տարիներին կառավարությունը կենսաթոշակային համակարգի ֆինանսավորումը պետք է համարի ծախսային քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը՝ ոլորտում վարվող պետական քաղաքականության հիմնական նպատակը դիտարկելով կենսաթոշակառուների սոցիալական վիճակի շարունակական բարելավումը և կենսաթոշակային համակարգի երկարաժամկետ ֆինանսական կայունության ապահովելուն միտված՝ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների իրականացումը: Ըստ այդմ՝ կառավարության գործունեությունը պետք է միտված լինի նախ՝ նվազագույնի հասցնելու, ապա՝ բացառելու աղքատությունը և աղքատության ռիսկը կենսաթոշակառուների շրջանում, շարունակաբար նվազեցնելու աշխատող բնակչության և կենսաթոշակառուների (ներառյալ՝ հաշմանդամների) կենսամակարդակների միջև առկա մեծ տարբերությունը՝ թույլ չտալով վերջինիս հետագա խորացումը:

Ատենախոսության երրորդ՝ «Կենսաթոշակային համակարգի կարգավորման և վերահսկողության կատարելագործման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» գլխում, հեղինակը դիտարկում է մասնավոր կենսաթոշակային ֆոնդերի ստեղծումը՝ որպես ՀՀ կենսաթոշակային համակարգի բարելավման ուղի և առաջարկում ու հիմնավորում վերջիններիս հետևյալ հիմնական տնտեսական առավելությունները՝

- արդյունավետությունը և ինֆորմացիայի թափացիկությունը,
- դիվերսիֆիկացիա,
- պրոֆեսիոնալ կառավարումը,
- իրացվելիությունը,
- հարկային արտոնությունները,
- կարգավորումը:

⁹ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. www.armstat.am:

Հեղինակը ուսումնասիրել է մասնավոր կենսաթոշակային ապահովագրության միջազգային փորձը և մատնանշել դրա ներդրման հեռանկարները ՀՀ-ում:

Հեղինակը նշում է, որ Հայաստանի համար արդարացի կլիներ այն մոտեցումը, համաձայն որի՝ կենսաթոշակային տարիքի աշխատակիցների համար չեն կատարվի սոցիալական ապահովագրական վճարներ և նրանց կվճարվի հասանելիք կենսաթոշակի 50%-ը: Դա կբերի, մի կողմից, սոցիալական ապահովագրության պետական ֆոնդի կենսաթոշակային ծախսերի որոշ չափի կրճատմանը, միաժամանակ կապահովի ապահովագրական և սոցիալական ու տնտեսական արդարության սկզբունքը:

Համակարգի կատարելագործումը պահանջում է նաև սոցիալական ապահովագրության պետական ծառայության կառավարման արդյունավետության բարձրացում: Ուստի ատենախոսության մեջ առաջարկվում է կենսաթոշակային ապահովագրության համակարգի արդյունավետության բարձրացման հիմնարար հետևյալ ուղղությունները՝

1. Պետք է անցում կատարել կենսաթոշակների նորմատիվային ձևավորման սկզբունքին:

Յուրաքանչյուր տարվա միջին պարտադիր պետական աշխատանքային կենսաթոշակը պետք է սահմանվի տվյալ տարվա միջին աշխատավարձի որոշակի տոկոսով: Ելնելով տվյալ տարվա միջին աշխատավարձի նկատմամբ օրենքով սահմանված նորմատիվից, պետությունը նաեւ պետք է սահմանի, որ՝

- 1) պարտադիր կենսաթոշակային համակարգի միջոցով ստացվող թոշակների միջին մեծությունը կարճ ժամանակում միջին աշխատավարձի նկատմամբ ներկայիս 20 տոկոսից պետք է հասցնել 30, հետագայում, ընդհանուր կենսաթոշակի տեսքով, մինչեւ 45-50 տոկոսի:
- 2) Պետական թոշակներն ավելի ուշ պետք է կազմեն ընդհանուր (պետական + լրացուցիչ) կենսաթոշակի 55-60 տոկոսը (ներկայումս այն 100 տոկոս է):
- 3) Այս ֆոնդից տրվող կենսաթոշակի մեծությունը պետք է որոշվի միջին աշխատավարձի նկատմամբ ինտերվալային նորմատիվով. ինտերվալի ստորին սահմանը՝ ցածր աշխատանքային ստաժի (5-18), միջին սահմանը՝

միջին աշխատանքային ստաժի (19-34) եւ վերին սահմանը՝ բարձր աշխատանքային ստաժի (35-49) համար:

Նվազագույն պետական կենսաթոշակի չափը նույնպէս պետք է հաշվարկվի միջին աշխատավարձի նկատմամբ տոկոսով:

2. Պետական պարտադիր կենսաթոշակային համակարգին կատարվող վճարումները, ըստ հեղինակի պետք է կատարվեն անձնական եկամուտներից վճարումների (հարթ կամ չափավոր տարբերակման տոկոսադրույքի կամ բացարձակ վճարումների տեսքով) եւ գործատուների վճարումների տեսքով: Ընդ որում՝ երկարատեւ ժամանակաշրջանի համար վճարման չափը կապակցվում է միջին աշխատավարձի հետ: Պետական պարտադիր կենսաթոշակային համակարգից կարելի կլինի օգտվել քաղաքացիների՝ օրենքով սահմանված տարիքային ժամկետը լրանալուց հետո: Տղամարդկանց կենսաթոշակային տարիքը առաջարկվում է հավասարեցնել կանանց կենսաթոշակային տարիքին (դա կարելի է անել 5 տարվա ընթացքում):

3. Մասնավոր (ոչ պետական) կենսաթոշակային ֆոնդերի ստեղծում եւ խրախուսում: Պետությունը պետք է երաշխավորի մասնավոր կենսաթոշակային ֆոնդերի գործունեությունը եւ թույլ տա եկամուտների որոշակի տոկոսը (ինչպէս աշխատողների, այնպէս էլ գործատուների համար) առանց հարկումի փոխանցել նշված ֆոնդերին, որից կգոյանա քաղաքացիների լրացուցիչ կենսաթոշակը: Առաջին 5 տարվա համար կարելի է սահմանել աշխատավարձի մինչեւ 5, հաջորդ հինգ տարվա համար՝ մինչեւ 6.5 եւ դրանից հետո՝ մինչեւ 8 տոկոս նորմատիվ: Այդ փոխանցումների մասին որոշումը կայացնում է գործավորը՝ կամավորական սկզբունքով (կառավարության այսօրվա ծրագրում սա պարտադիր է բնակչության մեծամասնության համար) ու օրենքով սահմանված կարգով: Աշխատողի կամավոր որոշման պարագայում գործատուի համաձայնությունը պարտադիր է (կառավարության ծրագրում գործատուն մուծումներ չի կատարում, համավճարները կատարում են պետական բյուջեից, այն է՝ հարկատուների միջոցներից):

Մասնավոր կենսաթոշակային ֆոնդերին աշխատողների եւ գործատուների մուծումները պետք է հանվեն հարկման բազայից: Սա աշխատողների եւ գործատուներին տնտեսապէս կշահագրգռի մասնակցել մասնավոր

կենսաթոշակային ֆոնդերին, ի տարբերություն կառավարության ծրագրի, ուր տնտեսական շահագրգռվածության փոխարեն օգտագործված է հարկադրանքի մեխանիզմը:

4. Ինքնագրադված բնակչության կողմից մասնավոր կենսաթոշակային ֆոնդերին կատարվող մուծումները:

5. Պետության մասնակցությունը մասնավոր կենսաթոշակային ֆոնդերի ձեւավորմանը:

6. Պետական եւ մասնավոր կենսաթոշակներ: Ըստ հեղինակի՝ մասնավոր (լրացուցիչ) կենսաթոշակները առաջիկայում աստիճանաբար պետք է կազմեն միջին կենսաթոշակի 40-50 տոկոսը: Դրանով իսկ հնարավորություն կստեղծվի միջին ընդհանուր կենսաթոշակը հասցնել միջին աշխատավարձի մինչեւ 45-55 տոկոսին: Մասնավոր կենսաթոշակային համակարգը պետք է տարանջատված լինի պետական կենսաթոշակային համակարգից: Սակայն պետությունը ակտիվ մասնակցություն պետք է ունենա մասնավոր կենսաթոշակային ֆոնդերի միջոցների ձեւավորման ու կառավարման գործում: Նախ, պետությունը պետք է սահմանի ներդրումային ծրագրերի ցանկը: Կենսաթոշակային ֆոնդերի ներդրումներն այդ օբյեկտներում պետք է երաշխավորվեն: Երկրորդ, պետությունը պետք է տնօրինի մասնավոր կենսաթոշակային ֆոնդերի պահուստները՝ վճարելով համապատասխան տոկոսադրույք:

Կենսաթոշակային համակարգերի վերահսկողության միջազգային փորձն ընդհանրացնելով, հեղինակը փաստում է, որ այն կիրառելի է նաև ՀՀ-ի կուտակային կենսաթոշակային համակարգի կատարելագործման համար: Ներկայումս ՀՀ ողջ կենսաթոշակային համակարգը գտնվում է պետության վերահսկողության ներքո: Հայտնի է, որ ՀՀ-ում ձևավորել է կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների ինստիտուտը, ովքեր իրականացնում են մասնավոր կենսաթոշակային ֆոնդերի կառավարումը: Բացի դրանից պետությունը, Կենտրոնական բանկը վերահսկողություն են իրականացում նրանց նկատմամբ՝ հատուկ ֆինանսական կարգավորման միջոցներով, նորմատիվային համապատասխան դրույթներով: Այդուամենայնիվ, կարծում ենք, որ անհրաժեշտ է ստեղծել ևս մեկ մարմին, որը

անկախ կլինի կառավարությունից և վերահսկողություն կիրականացնի հենց մասնավոր կենսաթոշակային ֆոնդերի գործունեության նկատմամբ:

Հեղինակն առաջարկում է ստեղծել միավորված վերահսկողական մարմին, որի գործունեությունը կապահովի հետևյալ առավելությունները՝

- Ֆինանսական սեկտորի (կոնսաթոշակային ներդրումային ֆոնդեր) արդյունավետ վերահսկողություն: Գոյություն ունեն հոլդինգային ռիսկեր, որոնց բացահայտումը և կանխումը հնարավոր չէ (կամ քիչ արդյունավետ է) ոչ միավորված կարգավորման և վերահսկողության պայմաններում:
- Մրցակցային չեզոքություն: Համանման ծառայություններ մատուցող ֆինանսական կազմակերպությունները վերահսկվում են տարբեր խստության վերահսկողական դաշտեր ունեցող մարմինների կողմից, ստեղծելով անարդար մրցակցային դաշտ:
- Կարգավորման ճկունություն: Ապակենտրոն վերահսկողությունը հնարավորություն չի տալիս արդյունավետ վերահսկել նոր գործառնությունները կամ կազմակերպությունները, քանի որ հաճախ օրենքով ամրագրված չի լինում, թե որ մարմինն է այդ նոր գործառնության կամ միջնորդի կարգավորողը կամ վերահսկողը:
- Մասշտաբի էֆեկտ: Ստեղծելով միավորված գործակալություն՝ հնարավորություն կընձեռվի օգտվել մասշտաբի էֆեկտից, խնայելով ենթակառուցվածքների, տեղեկատվության, տեխնոլոգիաների և ադմինիստրացիայի կրկնօրինակման հետ կապված ծախսերը: Սա շատ կարևոր է փոքր երկրների համար:
- Պրոֆեսիոնալ անձնակազմի ներգրավում և զարգացում: Այս գործոնը կարևոր է հատկապես անցումային երկրների համար, որտեղ նոր կարգավորող մարմինը ձևավորման փուլում է, և երկիրը հարուստ չէ համապատասխան կադրային ռեսուրսներով:
- Բարելավված հաշվետվողականություն: Հասարակության, ֆինանսական համակարգի, շահագրգիռ անձանց համար ավելի հեշտ է

պատասխաններ պահանջել միավորված մարմնից՝ նրա ձախողումների, սխալների, չիրականացված նպատակների համար:

- Գործակալության անկախությունը: Միավորված գործակալության համար ավելի դյուրին է ապահովել անկախության մեծ աստիճան:
- Միավորված վերահսկողության ֆինանսավորումը, քանի որ միավորված կարգավորման և վերահսկողության ֆինանսավորման ծախսերն ամբողջությամբ վճարում են վերահսկվող կազմակերպությունները, իսկ վճարների անբավարարության պայմաններում, պետությունը լրացուցիչ միջոցներ է տրամադրում:

Հեղինակն առաջարկում է Կենսաթոշակային ֆոնդերի միավորված կարգավորման և վերահսկողության կառուցվածքի երկու հիմնական մոտեցում՝ ինստիտուցիոնալ և գործառնական: Առաջինը ենթադրում է, որ միավորված կարգավորման և վերահսկողության մեջ մտնող ստորաբաժանումներն առանձնացված են ըստ կառուցվածքի (օրինակ՝ սոցիալական ապահովության, ապահովագրական կամ օրինակ պարտադիր կուտակային բաղադրիչի վարչություն): Երկրորդ տարբերակի դեպքում՝ միավորված կարգավորման և վերահսկողության մեջ մտնող ստորաբաժանումներն առանձնացված են ըստ գործառնությունների (օրինակ՝ վերահսկողության, լիցենզավորման, հաճախորդների հետ հարաբերությունների վարչություն):

Ատենախոսության «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները և եզրահանգումները և ներկայացվել հետևյալ դրույթներով՝

- Կենսաթոշակային համակարգը պետք է համապատասխանի երկրի տնտեսական զարգացման աստիճանին և կայունությանը, ավանդույթներին, սոցիալական ապահովության ձևավորված փորձին, վարձու աշխատողների կազմակերպվածության աստիճանին, կենսաթոշակային ապահովության ինստիտուցիոնալ զարգացմանը:
- Միջազգային փորձի համաձայն, պատշաճ վերահսկողությունը հանդիսանում է կարևորագույն գործոն, առանց որի անհնար է կենսաթոշակային համակարգի արդյունավետ գործունեությունը: Վերահսկողությունը

իրականացվում է կոշտ և խիստ կանոններով և ենթադրում է այդ թվում նաև՝ փաստաթղթային և տեղերում վերահսկողության շարունակական իրականացում, ծագած խնդիրների վաղաժամկետ հայտնաբերմանն կանխարգելման հնարավորություն, տույժերի և տուգանքների կիրառման հնարավորություն, լիցենզիայի հետ կանչման և անվավեր ճանաչման հնարավորություն, աշխատողների նկատմամբ որակավորման պահանջների համապատասխանեցման ստուգում:

- Կենսաթոշակային բարեփոխումների գլխավոր խնդիրներից են կենսաթոշակի մեծության որոշման արդարացի և թափանցիկ ընթացակարգերի սահմանումը, փաստաթղթերի տրամադրման կարգի պարզեցումն ու քաղաքացու աշխատած տարիների քանակի և աշխատավարձի չափի վերաբերյալ տրամադրվող տեղեկատվության ճշգրտության երաշխավորումը: Հենց այս խնդիրներն էլ այսօր թույլ են տալիս լուծել ստեղծված անհատական (անձնավորված) հաշվառման համակարգը:
- Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ֆոնդերի և ֆոնդերի կառավարիչների աուդիտի ոլորտում կարևորագույն բացերից է այն, որ ներկայումս չկա ներդրումային, այդ թվում կենսաթոշակային ֆոնդերի և ֆոնդերի կառավարիչների աուդիտն իրականացնող անձանց նկատմամբ հստակ սահմանված պահանջներ: Մասնավորապես, նման պահանջներ գործում են բանկի, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների, հաշվետու թողարկողների աուդիտն իրականացնող անձանց նկատմամբ:
- Որպես կենսաթոշակային համակարգի բարելավման ուղի անհրաժեշտ է դիտարկել մասնավոր կենսաթոշակային ֆոնդերի ներդրումը՝ առաջարկելով և հիմնավորելով վերջիններիս հետևյալ հիմնական տնտեսական առավելությունները՝
 - *արդյունավետությունը և տեղեկատվության թափանցիկությունը,*
 - *դիվերսիֆիկացիա,*
 - *պրոֆեսիոնալ կառավարումը*
 - *իրացվելիությունը,*

• *հարկային արտոնությունները:*

- Ապահովագրական հիմքի վրա կենսաթոշակների վճարումը հիմնված է տնտեսական և սոցիալական արդարության սկզբունքի վրա: Հիմնվելով այս դրույթի վրա՝ անհրաժեշտ է բացառել կենսաթոշակային տարիքի հասած՝ աշխատող անձանց կողմից պարտադիր սոցիալական վճարների կատարումը:
- Մասնավոր կենսաթոշակային ֆոնդերի օրենսդրության պարտադիր հոդվածներից մեկը պետք է լինի մուծումների տարիների, աշխատավարձի նկատմամբ սահմանված մուծումների տոկոսի եւ վերջում ստացվող ամսական անուիտետի չափի (փայատիրոջ՝աշխատողի միջին աշխատավարձի նկատմամբ տոկոսով) միջեւ կապը ցույց տվող հաշվարկը: Այս մեխանիզմը (ի տարբերություն կառավարության ծրագրի) թույլ կտա պարտավորեցնել կենսաթոշակային ֆոնդերին՝ սահմանել կենսաթոշակային վճարումների կոնկրետ չափեր եւ առաջիկա 5-45 տարվա կտրվածքով կբացառի սղաճի ու դրամի արժեզրկման արդյունքում մասնավոր կենսաթոշակների վճարվող ամսական անուիտետի գրոյացումը:
- Կորպորատիվ կամ գործատուի կողմից առաջարկվող կամավոր կենսաթոշակային հատկացումները կարող են կատարվել միայն գործատուի կամ գործատուի և աշխատողի կողմից: Սակայն օրենքն արգելում է պարտադրել աշխատողին մասնակցել կամ շարունակել մասնակցությունը գործատուի ձեռք բերած կամավոր կենսաթոշակային սխեմային՝ որպես տվյալ գործատուի մոտ աշխատելու անհրաժեշտ պահանջ:
- Կորպորատիվ կամավոր սխեմաները գործատուի տեսանկյունից կարող են կարևոր դեր խաղալ որակյալ աշխատուժ ներգրավելու և պահպանելու համար, իսկ աշխատողների տեսանկյունից՝ ապագայում համարժեք կենսաթոշակային եկամուտ ստանալու համար:
- Կենսաթոշակային ֆոնդերի մեծության աճն արտացոլում է տնտեսությունում մասշտաբային և միջազգային մասշտաբով ֆինանսական ու սոցիալական ոլորտների փոփոխությունները: Ներդրումային ոլորտի զարգացման փորձը ցույց է տալիս, որ այդ ֆոնդերի լավ արդյունքները կախված են առաջին

հերթին կարգավորման ռեժիմից և հասարակական հուսալիության աստիճանից:

- կենսաթոշակային բարեփոխումների կարգավորումը և վերահսկողությունը պետք է ամփոփել մեկ գործակալությունում՝ ստեղծելով միավորված վերահսկողական մարմին՝ պայամանավորված մի շարք առավելություններով:
- կառավարման մեկ միասնական մարմնի ձևավորման մոդելը պետք է ապահովի վերահսկող մարմնի առավելագույն անկախությունը: Որոշ դեպքերում խորհրդի անդամները կարող են նշանակվել շահագրգիռ գերատեսչությունների (կենտրոնական բանկ, ՀՀ ֆինանսների նախարարություն, կամ այլ գերատեսչություն) կողմից:
- Առաջարկում ենք կենսաթոշակային ֆոնդերի միավորված կարգավորման և վերահսկողության կառուցվածքի երկու հիմնական մոտեցում՝ ինստիտուցիոնալ և գործառնական: Առաջինը ենթադրում է, որ միավորված կարգավորման և վերահսկողության մեջ մտնող ստորաբաժանումներն առանձնացված են ըստ կառուցվածքի (օրինակ՝ սոցիալական ապահովության, ապահովագրական կամ կուտակային բաղադրիչի վարչություն): Երկրորդ տարբերակի դեպքում՝ միավորված կարգավորման և վերահսկողության մեջ մտնող ստորաբաժանումներն առանձնացված են ըստ գործառնությունների (օրինակ՝ վերահսկողության, լիցենզավորման, հաճախորդների հետ հարաբերությունների վարչություն):
- Միասնական վերահսկողական մարմնի ստեղծման հիմնական դրդապատճառը շուկայում ընդհանուր ռիսկերի վերահսկումն է. աշխարհում ֆինանսական համակարգի զարգացումներին բնորոշ են բանկային, ապահովագրական և արժեթղթերով գործունեությունների մերձեցման միտումները, ինչը վերահսկողությունից պահանջում է գնահատել ինչպես ֆինանսական շուկայի տարբեր հատվածներին բնորոշ ռիսկերը, այնպես և դրանց ազդեցությունը ֆինանսական շուկայի այլ հատվածների վրա: Անգամ այն դեպքերում, երբ ֆինանսական շուկայի առանձին հատվածների մերձեցումն ակնհայտ չէ, միևնույն է, մի հատվածին բնորոշ ռիսկերը մեծ ազդեցություն են թողնում մյուս հատվածների վրա:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտահայտված են հետևյալ
հրապարակումներում**

1. Ասատրյան Ա.Ա. Կենսաթոշակային հիմնադրամների և դրանց կառավարիչների աուդիտի հիմնախնդիրները ՀՀ-ում//Ֆինանսներ և էկոնոմիկա. Երևան, 2013. № 1(151). – էջ 44-46:
2. Ասատրյան Ա.Ա. Կենսաթոշակային համակարգերի վերահսկողությունը ԱՄՆ-ում և Եվրամիության երկրներում//Ֆինանսներ և էկոնոմիկա. Երևան, 2013. № 6(156). – էջ 72-76:
3. Асатрян А.А. Зарубежный опыт частного пенсионного страхования и тенденции развития в Республике Армения//Вестник Российско-Армянского (Славянского) университета: Гуманитарные и общественные науки. Ереван, 2014. № 2. – С. 38-46.

Асатрян Арагац Араевич

Проблемы регулирования и контроля пенсионной системы РА.

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 – "Финансы, бухгалтерский учет".

Защита диссертации состоится 26-ого февраля 2015 года в 15³⁰ часов на заседании Специализированного Совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу 0025, г. Ереван, ул. Налбандяна, 128.

РЕЗЮМЕ

Диссертационное исследование посвящено проблемам регулирования и контроля пенсионной системы в Республике Армения. Пенсионная система в Республике Армения стоит перед проблемой коренных реформ, которые сопровождаются социальными недовольствиями, поскольку меняется пенсионный возраст и растет размер вкладов в пенсионных фондах. Кроме этого возникают проблемы в сфере контроля деятельности пенсионных фондов, что создает дополнительные проблемы. В разных странах сформированы разные системы и механизмы управления пенсионными фондами, которые нуждаются в совершенствовании. Это и многие другие проблемы обуславливают актуальность темы диссертационной работы.

В работе исследованы сущность, элементы и виды пенсионных систем, особенности пенсионных фондов, международный опыт формирования пенсионных систем, а также проблемы управления и контроля в США и странах Евросоюза. В диссертации также проанализирована пенсионная система Республики Армения в контексте социальной политики, обозначены пути реформ и проблемы управления пенсионных фондов в Республике Армения. В работе исследованы пути совершенствования управления и контроля пенсионной системы в Республике Армения.

Объектом исследования является пенсионная система Республики Армения, а предметом исследования – проблемы регулирования и контроля пенсионной системы в Республике Армения.

Целью диссертации является обусловливание главных путей усовершенствования регулирования и контроля пенсионной системы в Республике Армения, адаптированное к условиям современной экономики, и учитывая международный опыт и тенденции развития, анализ наиболее актуальных проблем пенсионной системы и продвижение начальных основ формирования эффективной стратегии, которая направлена на их решение. Для достижения поставленной цели были выдвинуты следующие задачи.

- Изучить сущность пенсионной системы, выделить в нем элементы и основные виды,
- Обозначить и оценить проблемы аудита пенсионных фондов и управляющих в Республике Армения,
- Изучить управление финансов пенсионных фондов в Республике Армения, дать оценку стабильности и надежности пенсионных фондов,
- Оценить международный опыт частного пенсионного страхования и возможности развития в Республике Армения,
- Обозначить и обусловить пути усовершенствования регулирования и контроля пенсионных фондов.

Основные результаты и новизна исследования заключаются в следующем:

- обоснована необходимость наличия критериев оценки деятельности пенсионных фондов, разработаны основные критерии оценки, в частности, система абсолютных и относительных показателей оценки финансовой устойчивости и ликвидности пенсионных фондов, а также, эффективности инвестирования активов этих фондов,
- разработаны основные пути регулирования и контроля деятельности пенсионных фондов, в частности, пути усовершенствования регулирующей базы, процедур выполнения заочного контроля и проверок, а также, система предупредительных индикаторов возникновения рисков,
- обоснована необходимость создания объединенного контрольного органа пенсионной системы, обозначив основные пути регулирования и концептуальные подходы к формированию.

Asatryan Aragats Ara

Problems of Pension System Regulation and Supervision in the RA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality 08.00.03 – 'Finance, atccounting'.

The defense of the thesis will take place on February 26, 2015 at 15³⁰ o'clock at Council of Economics of the SCC RA at Armenian State University of Economics: 128 M. Nalbandyan Street, Yerevan 0025.

ABSTRACT

The thesis is devoted to the problems of the pension system regulation and supervision in the Republic of Armenia. The pension system in Republic of Armenia is facing the problem of fundamental reforms that are accompanied with social discontent, since the retirement age is changing and the size of contributions to the pension funds are increasing. In addition, there are problems in the sphere of control of pension funds, which create additional problems. Different countries have formed different systems and mechanisms for managing pension funds that need improvement. This and many other problems cause the relevance of the topic of the thesis.

The nature of pension system's elements and types are examined in the research, especially pension funds, international experience in pension systems, as well as problems of pension management and control in the United States and European Union. The thesis also analyzed the pension system in the Republic of Armenia in the context of social policy, marked the paths of the reform and governance issues of pension funds in the Republic of Armenia. The ways to improve the management and control of the pension system in the Republic of Armenia have also been studied.

The object of the thesis is the pension system of the Republic of Armenia, and the subject are the problems of the pension system regulation and supervision in the Republic of Armenia.

The purpose of the thesis is the establishment of the ways to improve the regulation and control of the pension system in the Republic of Armenia, which are adapted to the conditions of the modern economy, also, the analysis of more relevant problems of the pension system and the promotion of the initial basis for the formation of an effective strategy, considering the international experience. To achieve this goal the following objectives were put forward:

- Examine the nature of the pension system, extract the basic elements and the main types,
- Identify and assess the problems connected with the pension funds and the managers in the Republic of Armenia,
- Examine the management of pension funds' finance in the Republic of Armenia, assess the stability and the possible development of the pension funds,
- Assess the international experience of the private pension insurance, and the possibility of development in the Republic of Armenia
- Identify and determine ways to improve the management and control of pension funds.

The main results and novelty of the research are as follows:

- there was substantiated the necessity of existence of evaluation criteria for pension funds, there were developed the main evaluation criteria, in particular, the system of absolute and relative indicators for assessing financial stability and liquidity of pension funds, as well as the efficiency of investment of the assets of these funds,
- there were developed basic ways to regulate and control the activities of pension funds, in particular, ways to improve the regulatory framework, implementation procedures for off-site and on-site supervision, as well as a system of risk warning indicators,
- there was substantiated the necessity of creating an integrated pension system supervisory body, outlined the main ways of supervision and conceptual approaches to the formation.

